ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Գայանե Գաբրիելյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Կորեայի Հանրապետություն (Ինչոն), 2022 թվականի սեպտեմբերի 12-ից 17-ը

4. Հրավիրող կողմը.

Կանաչ կլիմայի հիմնադրամ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Կանաչ կլիմայի հիմնադրամի (ԿԿՀ) համաշխարհային ծրագրավորման 2-րդ համաժողովին՝ 2023-ից 2027 թվականների համար: Համաժողովի նպատակն էր ստեղծել հարթակ ԿԿՀ-ի շահագրգիռ կողմերի համար՝ քննարկելու երկրորդ շրջանի համալրման ռազմավարությունը: Ռազմավարության նպատակն է հրատապ արձագանքել կլիմայի փոփոխությանը և նպաստել Փարիզի համաձայնագրով սահմանված նպատակների իրականացմանը, փնտրել լուծումներ, թե ինչպես բարձրացնել կլիմայական ներդրումների արդյունավետությունը համաշխարհային տնտեսական աճող ճնշումների և անորոշության պայմաններում՝ ձգտելով կայունության: Համաժողովը նաև նպատակ ուներ բարելավել երկրների մակարդակով պլանավորումը, կիսվել ծրագրերի իրականացման ընթացքում քաղած դասերով և տարածել ԿԿՀ գործիքակազմի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ամրապնդել ԿԿՀ գործընկերային ցանցը:

Համաժողովին մասնակցում էին փոխվարչապետներ, նախարարներ, փոխնախարարներ հավատարմագրված կառույցների ղեկավարներ և բարձրաստիճան պաշտոնյաներ 60 երկրից՝ շուրջ 500 մասնակից:

6.Քննարկված թեմաները.

Համաժողովը կազմված էր բարձրաստիճան հատվածից (սեպտեմբերի 13)՝ նպատակաուղղված կլիմայական հավակնության բարձրացման համար ԿԿՀ գործընկերների դերի կարևորմանը, երկօրյա զուգահեռ թեմատիկ և ոլորտային քննարկումներից (սեպտեմբերի 14-15) և երկկողմ հանդիպումներից:

Ներկայացվել և քննարկվել են.

- կլիմայական գործողությունների իրականացման գործում ԿԿՀ-ի դերը,
- ԿԿՀ համալրման երկրորդ՝ 2023-2027թթ շրջանի ռազմավարությունը,
- կլիմայի փոփոխությանն ուղղված հրատապ կարիքներին արդյունավետորեն արձագանքելու անհրաժեշտությունը Փարիզի համաձայնագրով սահմանված նպատակներին հասնելու համար,
- երկրների ներգրավվածության բարձրացումը՝ ԿԿՀ աշխատանքների պլանավորման կատարելագործման և ֆինանսական միջոցների ներգրավվման առումներով:

  Համաժողովի բարձրաստիճան հատվածը հարթակ էր ստեղծել ԿԿՀ ծրագրերի իրականացման վերաբերյալ փորձի փոխանակման համար և նախարարի տեղակալը ներկայացրել է Հայաստանի փորձը:

Համաժողովում պանելային քննարկումները թեմատիկ էին՝ նպատակաուղղված արդյունավետ և ազդեցիկ կլիմայական ներդրումների համար հիմնաքարի ստեղծմանը, Ազգային մակարդակով սահմանված գործողությունների համար ներդրումների պլանավորմանը:

Թեմատիկ քննարկումներն էին՝ էկոհամակարգեր և էկոհամակարգային ծառայությունները, էներգաարդյունավետությունը, ջրային անվտանգությունը, գյուղատնտեսությունը և պարենային անվտանգությունը, ցածր ածխածնային և դիմակայուն տրանսպորտը, կլիմայական տեղեկատվությունը և վաղ ազդարարման համակարգերը: Տկն. Գաբրիելյանը որպես բանախոս հրավիրվեց ջրային անվտանգության հարցով պանելային քննարկմանը, որի ընթացքում ներկայացրեց ջրային քաղաքականության ոլորտում Հայաստանի ձեռքբերումները, ջրային ռեսուրսների ոլորտում արդյունավետ կառավարման խնդիրները՝ կապված կլիմայի փոփոխության հետ և ջրի սակավությունն ու ջրերի սխալ կառավարումը աշխարում կարող է նաև բախումների պատճառ հանդիսանալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովի ընթացքում տկն. Գաբրիելյանը հրավիրված էր Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների նախարարական փակ հանդիպմանը, որին մասնակցում էին ԿԿՀ գործադիր տնօրենը, Հյուսիսային Մակեդոնիայի փոխվարչապետը, Ղրղզստանի

Հանրապետության բնական ռեսուրսների, շրջակա միջավայրի և տեխնիկական վերահսկողության նախարարը և Ղազախստանի Հանրապետության էկոլոգիայի, երկրաբանության և բնական ռեսուրսների փոխնախարարը:

Իր ելույթի ընթացքում նախարարի տեղակալն անդրադարձել է սեպտեմբերի 13-ի կեսգիշերին Ադրբեջանի կողմից հրետանու և մարտական անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ Հայաստանի արևելյան և հարավարևելյան շրջանների ուղղությամբ իրականացված լայնածավալ հարձակմանը: Նախարարի տեղակալը նշել է այն աղետալի հետևանքները, որոնց հանգեցրել են Ադրբեջանի սանձազերծած ագրեսիվ գործողությունները, մասնավորապես նշելով՝ «Ադրբեջանի գործողությունները բացահայտ խախտում են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը՝ մասնավորապես դրա 2-րդ և 33-րդ հոդվածները, որոնք սահմանում են, որ բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ երկրի տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի սպառնալիքից կամ դրա կիրառումից: Ադրբեջանի միակողմանի գործողությունները իրական սպառնալիք են միջազգային խաղաղության և անվտանգության համար և արժանի են միջազգային հանրության պատշաճ արձագանքին»: Այնուհետև, անդրադառնալով օրակարգին, նախարարի տեղակալը ներկայացրել է կլիմայական ներդրումների ներգրավվման խոչընդոտները, մասնավորապես ընդգծել և շեշտել է ԿԿՀ խորհրդի կազմում Հայաստանի կրկին ներգրավվածության մասին, խոսել է ԿԿՀ ծրագրերի նախապատրաստման գործիքի կարևորության և անհրաժեշտության մասին (PPF) , որից Հայաստանը դեռևս չի օգտվել, **և առաջարկել է Հայաստանում կազմակերպել** ԿԿՀ ծրագրերի նախապատրաստման գործիքի վերաբերյալ տարածաշրջանային աշխատաժողով: Կարևորվել է տարածաշրջանում կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտում հետագա համագործակցության խորացման և ընդլայնման անհրաժեշտությունը՝ երկարաժամկետ կայունության հաստատման համար:

Նախարարի տեղակալը, որպես ազգային կլիմայական օրակարգի համակարգող, նշել է, որ 2021 թվականի հունվարի 20-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը վավերացրել է Արտոնությունների և առձեռնմխելիությունների մասին համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր)՝ կնքված Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայի հիմնադրամի միջև: Այս Համաձայնագիրն ապահովում է Հիմնադրամի գործունեության արդյունավետությունը և խթանում համագործակցությունը, ինչն առանցքային դեր է կատարում կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության թիրախներին հասնելու, ինչպես նաև կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու համար: Նախարարի տեղակալը ներկայացրել է երկրի սահմանած թիրախը Փարիզյան

համաձայնագրի ներքո, նշելով, որ 2021 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է իր Ազգային մակարդակով սահմանված գործողությունները տասը տարվա իրականացման ժամանակահատվածի համար (2021-2030)՝ սահմանելով մեղմման նոր թիրախ՝ 1990 թվականի արտանետումների մակարդակի համեմատ ցածր 40%-ով, ինչը պետք է իրականացվի 2030 թվականին: Հայաստանի ներգրավվածությունը ԿԿՀ-ին վկայում է այն փաստի մասին, որ կա կլիմայական ֆիանսների աջակցության պահանջարկ՝ աջակցելու անցումը ցածր ածխածնային և կլիմայական դիմակայությանը երկրում և տարածաշրջանում ապահովելու համար:

Նախարարի տեղակալը նշել է, որ կլիմայի փոփոխության հարմարվողականության քաղաքականությունն ու միջոցառումները առաջնային նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներին հասնելու համար, քանի որ Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է՝ խոցելի լեռնային էկոհամակարգերով: Տկն. Գաբրիելյանը ներկայացրել է 2021 թվականին Կառավարության կողմից ընդունված «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային ծրագիրը և 2021-2025թթ համար հաստատված միջոցառումները, և խոսել է ջրային ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման անհրաժեշտության մասին, քանի որ ջրային ռեսուրսների ոլորտը համարվել է որպես կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի առաջնահերթ ոլորտներից մեկը: Նախարարի տեղակալը ներկայացրել է, որ Հայաստանի կառավարությունը նախատեսում է թարմացնել ԿԿՀ-Հայաստան Երկրի ծրագիրը, ինչը կուղորդի մինչև 2027 թվականը համակարգված համագործակցությունը ԿԿՀ-ի հետ և հիմք կհանդիսանա առաջնահերթ ծրագրային նախագծերի ֆինանսավորման համար:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նախարարի տեղակալը երկկողմ հանդիպում է ունեցել ԿԿՀ Երկրի ծրագրավորման տնօրեն Կարոլինա Ֆուենտեսի հետ, քննարկվել են ԿԿՀ-ի հետ համագործակցության խորացման հնարավորությունները: Քննարկվել է նաև Հայաստանում 2023թ. առաջին եռամսյակում ԿԿՀ-ի «Կառուցվածքային երկխոսություն» համաժողովի անցկացման հնարավորությունը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար: Համաժողովի նպատակն է խթանել զարգացող երկրների և հիմնադրամի միջև համագործակցության աշխատանքները: Հայաստանում համաժողովի անցկացման հարցերը կքննարկվեն շրջակա միջավայրի նախարարության և հիմնադրամի աշխատակիցների միջև սույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, որը թույլ կտա վերջնական որոշում կայացնել Հայաստանում միջոցառման անցկացման վերաբերյալ:

Նախարարի տեղակալը երկկողմ հանդիպում է ունեցել ԿԿՀ-ի տարածաշրջանային համակարգող անձնակազմի հետ, ներկայացրել է ներկայումս ԿԿՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ընթացքը, քննարկել է ԿԿՀ ներկայացված ծրագրային առաջարկությունները: Որոշվել է լրամշակել ԿԿՀ ներկայացված 2 հայեցակարգային փաստաթուղթ՝ անտառների և վաղ ազդարարման ոլորտում՝ հաշվի առնելով այդ ոլորտներում Հայաստանի կառավարության կողմից սահմանած առաջնահերթությունները և թիրախները, որոնք ամրագրված են կառավարության 2021-2026թթ ծրագրում: Նախարարի տեղակալը նշել է, որ հաշվի առնելով՝ մինչև 2050 թվականը անտառապատ տարածքները կրկնապատելու Հայաստանի ստանձնած միջազգային հանձնառությունը, անտառային ոլորտում անհրաժեշտ են կապիտալ ներդրումներ և հստակ քարտեզներ: Հայեցակարգի նախագիծը կլրամշակվի և կներկայացվի ԿԿՀ: Վաղ ազդարարման վերաբերյալ հայեցակարգի նախագիծը նույնպես կլրամշակվի, ինչը կներառի ամբողջ երկրի կարիքները՝ համապատասխան բյուջեով: Ձևավորված գնառաջարկով հնարավոր կլինի ապահովել վաղ ազգարարման կարողությունները Երևանի և ևս երկու մարզերի համար, սակայն անհրժեշտ է ձեռք բերել և ապահովվել ամբողջ երկրի համար տեխնիկական կարողություններ և հայեցակարգը կվերադարձվի լրամշակման:
Նախարարի տեղակալը մասնակցել է երկկողմ հանդիպումների ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի ներկայացուցչի հետ, քննարկվել է Հայաստանում ՄԱԿ ՇՄԾ-ի գրասենյակ բացելու հնարավորությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Նախարարի տեղակալը ֆինանսական միջոցներ ներգրավվելու նպատակով ԿԿՀ-ի տարածաշրջանային ղեկավարին և ԿԿՀ հավատարմագրված կազմակերպություններին հայեցակարգային առաջարկների նախագծերի տեսքով ներկայացրել է Հայաստանի առաջնահերթությունները՝ կապված

- Երևանում և առաջնահերթ ևս երկու մարզերում վաղ ազդարարման համակարգի զարգացման համար տեխնիկական վերազինման,
- Հայաստանում ջրի երկրորդային օգտագործման և փակ շրջանառու համակարգի ներդրման հետ:

Նախարարի տեղակալը պայմանավորվածություն է ձեռք բերել ԿԿՀ-ի տարածաշրջանային անձնակազմի հետ՝ 2022թ. հոկտեմբերի կեսերին հանդիպելու առցանց ձևաչափով՝ քննարկելու Հայաստանի տեսլականը՝ 2023-24թթ նախագծերի և ծրագրերի ուղղվածությունը հստակեցնելու և հաջորդական քայլեր պլանավորելու նպատակով:

Ներկայացված առաջարկությունները կտեղադրվեն ԿԿՀ-ի կայքում և կդառնան քննարկման առարկա ԿԿՀ հավատարմագրված իրականացնող գործակալությունների կողմից:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Դայանե Գաբրիելյան

20.09.2022թ.